ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (86)
2020 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խմբագրական խորհուրդ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.
գլխավոր խմբագրի տեղակալ
Կարեն Գևորգյան - ի.գ.թ
գլխավոր խմբագրի տեղակալ
Աշոտ Պետրոսյան -
պատասխանատու քարտուղար
Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.
Նիկոլայ Ստոյկո - ի.գ.դ.
Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.
Արմեն Հայկյանց - ի.գ.դ.
Դավիթ Ավետիսյան - ի.գ.թ.
Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.
Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.
Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.
Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 060-71-02-47
էլ. կայք՝
http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:
12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:
e-mail: a_petrosyan@ysu.am
Դասիչ՝ 77771
Տպագրական 8 մամուլ
Գրանցման թիվը՝ 798
Տպաքանակը՝ 500
Գինը՝ պայմանագրային
Հանձնված է շարվածքի
24.12.2019
Հանձնված է տպագրության
15.05.2020

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ь Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (86)

2020 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Р е д а к ц и о н н ы й с о в е т

Самвел Дилбандян - д.ю.н.
зам. главного редактора
Карен Геворгян - к.ю.н.
зам. главного редактора
Ашот Петросян -
ответственный секретарь
Геворг Даниелян - д.ю.н.
Арутюн Хачикян - д.ю.н.
Николай Стойко - д.ю.н.
Армен Айкянц - д.ю.н.
Давид Аветисян - к.ю.н.
Артур Вагаршян - д.ю.н.
Сергей Аракелян - д.ю.н.
Ваге Оганнесян - д.ю.н.
Тарон Симонян - к.ю.н.

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 24.12.2019
Подписано к печати 15.05.2020

ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽԿԻՆ ԱՇԽԱՏԱԿԻՑ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑՆ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Դավիթ Զիլֆիմյան
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ,
Շիրակի մարզի դատախազության դատախազ

Քրեակատարողական իրավունքի հիմարար ինստիտուտներից է ազատազրկման դատապարտված անձանց դասակարգումը, որն օրենքով սահմանված չափանիշներով դատապարտյալներին բաժանում է որոշակի խմբերի՝ ստեղծելու նպաստավոր պայմաններ պատժի նպատակների արդյունավետ իրականացման համար: Այս հասկացությունը քրեակատարողական իրավունքի տեսության, քաղաքականության և օրենսդրության մեջ արդեն վաղուց տեղ գտած և իր արդյունավետությունը հիմնավորապես ապացուցած ինստիտուտներից է: Այն որոշակի հատկանիշների հիման վրա դատապարտվածների բաժանումն է համեմատաբար միասեռ խմբերի, որի նպատակն է առավել արդյունավետ դարձնել պատժի իրականացումը[1]:

Արդի իրավունքում այն արդեն միջազգայնորեն ամրագրված է: ՄԱԿ-ի «Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն չափորոշիչների կանոնների» 67 հոդվածի համաձայն՝ դասակարգումը նպատակ ունի՝ ա) ազատազրկվածներին առանձնացնել նրանցից, ովքեր իրենց հանցավոր անցյալի և բնավորության բացասական գծերի ուժով սպառնում են մյուսների վրա թողնել վատ ազդեցություն, բ) ազատազրկվածներին բաժանել խմբերի, որը կհեշտացնի նրանց հետ աշխատանքը՝ հասարակական կյանքին վերադարձնելու նպատակով[2]:

Փաստորեն, իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի հիմնահարցը քրեակատարողական իրավունքի ինստիտուցիոնալ համակարգում սերտորեն կապված է ազատազրկման դատապարտված անձանց դասակարգման իրավական ինստիտուտի հետ: Այդպիսի պնդման հիմքն առաջին հերթին դասակարգման տվյալ խմբի անձանց անջատ պահելու պահանջի զետեղումն է քրեակատարողական օրենսդրության այն բաժնում, որի կարգավորման առարկան ազատազրկման դատապարտվածների դասակարգումն ու դրա չափանիշներն են: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ ՔԿՕ) իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց անջատ պահելու վերաբերյալ դրույթը տեղ է գտել «Քրեակատարողական հիմնարկում դատապարտյալներին անջատ պահելը» վերտառությամբ հոդված 68-ում: Դատապարտվածները նախատեսված օրենսդրական չափանիշների հիման վրա դասակարգվում են որոշակի խմբերի, և սահմանվում են դրանց անջատ պահելու պահանջները: Նման բովանդակության հոդված ուներ Խորհրդային Միության «Ուղղիչ աշխատանքային օրենսդրության հիմունքները» (հոդված 18)[3]: Ընդ որում, քրեակատարողական իրավունքի տեսությունն ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս օրենքի այդ հոդվածում նախատեսված ի-

[1] Տե՛ս **Խաչիկյան Հ.Մ.,** Հայաստանի Հանրապետության քրեակատարողական իրավունք: Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատ., Եր., 2011, էջ 149:

[2] ՄԱԿ-ի 1955 թ. «Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն չափորոշիչների կանոնների» կառուցվածքի և բովանդակության մանրամասն վերլուծությունը տե՛ս Уголовно-исполнительное право России /Под ред. А.И. Зубкова.- М.: Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, с. 550-556:

[3] Տե՛ս Уголовно-исполнительный кодекс Российской Федерации. Концепция и оснсвные положения. Сопоставительный текст. Постатейный комментарий к новеллам. /В.И. Селивестров, Н.В. Шмаров, Л.В. Яковлев.- М.: Юрисрь, 1997, էջ 182-183:

րավադրությունները դիտում է որպես ազատազրկման դատապարտվածների դասակարգման օրենսդրական հիմք, իսկ դասակարգման տեսությունը կառուցված է դրա վրա[1]: Ասվածը հիմք է տալիս պնդելու, որ իրավապահ մարմինների նախկին աշխատակիցներին անջատ պահելն ազատազրկման դատապարտված անձանց դասակարգման քրեակատարողական իրավական ինստիտուտի ենթաինստիտուտ է:

Մինչև հետազոտական այս խնդրի կենսագործմանն անցնելը փորձենք վեր հանել դրան վերաբերող ուսումնասիրությունների արդի վիճակը: Հետազոտական խնդրի առարկան կազմված է երկու հիմնահարցերից՝

ա) ի՞նչ է «իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալ անձ» հասկացությունն ընդհանրապես քրեակատարողական իրավունքի համակարգում և տեսության մեջ,

բ) ի՞նչ է ազատազրկման դատապարտված անձանց դասակարգման տեսության ընդհանուր էությունը, և որո՞նք են դրա գիտական հիմնադրույթները:

Ի տարբերություն երկրորդի՝ առաջին հիմնահարցի՝ իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալ անձի հասկացության վերաբերյալ ուսումնասիրությունները բավականին սակավ են: Ընդ որում, ինչպես խորհրդային, այնպես էլ արդի տեսաբանները, կարծես թե, շրջանցում են այդ հիմնահարցը՝ չխորանալով դրա նպատակահարմարության, սոցիոլոգիական հիմքերի ու պատճառների, դասակարգման չափանիշի և նպատակների համապատասխանության հարցերի հետազոտման ու տեսական իմաստավորման մեջ[2]: Եթե խորհրդային ուղղիչ-աշխատանքային իրավունքի տեսության համար դրա անտեսումն ու անորոշությունը հնարավոր էր բացատրել քաղաքական պատճառներով, ապա մեր օրերում նման մոտեցումն անհասկանալի է: Բոլոր հեղինակները միտումնավոր շրջանցում են այդ հարցը, չեն խորանում հարցի էության մեջ, այն էլ այն դեպքում, որ քրեակատարողական իրավունքի տեսությունը վերը նշված դասակարգման նպատակների ու չափանիշների կապվածության մեթոդաբանական համատեքստում մշակել է նաև ազատազրկման դատապարտվածների դասակարգման չափանիշների տեսությունը[3]:

Փորձենք ամփոփ ներկայացնել ազատազրկման դատապարտվածների դա-

---

[1] Տե՛ս **Стручков Н.А., Брызгалов В.Н.,** Классификация осужденных к лишению свободы и определение им выда исправительно-трудовой колонии. Киев, 1967; **Шмаров И.В., Мелентьев М.П.**, **Брлиантов А.Б.,** Дифференцация исполнения наказания в исправительно-трудовых учереждениях. Пермь, 1971; **Рябкина А.А.**, Основы исправительно-трудового (уголовно-исполнительного) права Российской федерации. Вопросы диференцации и индивидуализации наказания, М., 1995; **Брлиантов А.Б.,** Проблемы классификации осужденных к лишению свободы в целях дифференцации условий отбывания наказания: Монография. – М.: ВНИИ МВД РФ, 1995, 144 с.; **Брлиантов А.Б.,** Дифференцация наказания и степень исправления осужденных к лишению свабоды: Монография.- ВНИИ МВД России, 1997.

[2] Օրինակ՝ 1988 թ., այսինքն՝ գորբաչովյան վերակառուցման քաղաքականության օրոք և բացախոսության պայմաններում հրատարակված հետազոտություններից մեկում քննարկելով դատապարտյալների հասարակությունից մեկուսացնելու պայմաններում նրանց վարքագծի օրինաչափությունները, համառորեն չեն բարձրացնում այդ խնդիրը (տե՛ս **Хохряков Г.Ф., Саркисов Г.С.,** Преступления осужденных: причини и предупреждение: (Основные проблемы пенитенциарной криминологии) /Отв. редактор Сахаров А.Б.- Ер.: Айастан, 1988, 280 с.)

[3] Տե՛ս **Стручков Н.А., Брызгалов В.Н.,** Классификация осужденных к лишению свабоды и определение им выда исправительно-трудовой колонии. Киев, 1967; **Стручков Н.А.** Курс иправительно-трудового права: Проблемы особенной части. М., 1985; Советское исправительно-трудовое право /**Беляев Н.А., Бойцов А.И.** и др., под ред. Н.А. Беляева, В.С. Прохорова.- Л.: Изд-во Ленинградского университета, 1989, с. 70; **Брлиантов А.Б.,** Проблемы классификации осужденных к лишению свободы в целях дифференцации условий отбывания наказания: Монография. – М.: ВНИИ МВД РФ, 1995, с. 29-52; Уголовно-исполнительное право России /Под ред. А.И. Зубкова.- М.: Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, с. 290-291; **Брлиантов А.Б.,** Дифференцация наказания и степень испрсвления осужденных к лишению свабоды: Монография.- ВНИИ МВД России, 1997, с. 21-45.

սակարգման տեսության հիմնադրույթները և դրանց համատեքստում իմաստավորել իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների հիմնահարցը: Քրեակատարողական իրավունքում ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտվածների դասակարգումը պետք է հասկանալ երկու իմաստով: Առաջին՝ նախնական դասակարգում. ըստ օրենքով սահմանված առանձին տեսակի՝ քրեակատարողական հիմնարկներում պատժի կրումը կազմակերպելու համար, և երկրորդ՝ հետագա դասակարգում, որ կատարվում է արդեն բուն քրեակատարողական հիմնարկում՝ ըստ վերասոցիալականացման (ուղղման) աստիճանի[1]: Սույն աշխատանքում դասակարգման հիմնահարցը դիտարկվելու է միայն առաջին իմաստով:

1. Ազատազրկման դատապարտված անձանց դասակարգումը՝ որպես օրենքով ամրագրված մեթոդ, համարվում է պատժի տարբերակման ու անհատականացման միջոց: Իսկ պատժի կատարման անհատականացումը քրեակատարողական իրավունքի տեսության մեջ հասկացվում է որպես «յուրաքանչյուր դատապարտյալի նկատմամբ նրա անհատականությունը բնութագրող տվյալների հաշվառմամբ կիրառվող ուղղիչ-աշխատանքային իրավունքի նորմերով սահմանված ռեժիմի ընդհանուր կանոններ, ինչպես նաև իրավունքի նորմերով ու ուղղիչ-աշխատանքային մանկավարժության համապատասխան սկզբունքներով նախատեսված ուղղիչ-աշխատանքային ներգործության միջոցներ և մեթոդներ»[2]:

2. Ազատազրկման դատապարտված անձանց դասակարգումը կատարվում է որոշակի նպատակներից ելնելով, ինչն էլ իր հերթին ուղղված է պատժի կատարման նպատակների կենսագործմանը[3]:

3. Ազատազրկման դատապարտվածների դասակարգման նպատակներից բխում են դասակարգման չափանիշները: ՀՀ, ՌԴ, հետխորհրդային այլ հանրապետությունների օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայումս ազատազրկման դատապարտվածների դասակարգման չափանիշներ են համարվում սոցիալ-ժողովրդագրական (սեռը, տարիքը, քաղաքացիությունը, առողջական վիճակը), քրեաիրավական (կատարված հանցագործության տեսակը, մեղքի ձևը, պատժի տեսակը և ժամկետը, հանցագործության ռեցեդիվը) վիճակը, այնուհետև՝ ազատազրկման դատապարտվելը: Ընդ որում, այդ չափանիշները սերտորեն կապված են քրեական իրավունքում հանցագործությունների տեսակների հետ: Հանցագործությունների դասակարգման չափանիշներն ազդում են արդեն դատապարտված անձանց դասակարգման վրա[4]: Աշխատանքի վայրը մինչև կալանավորվելը որպես չափանիշ նշում են հազվադեպ հեղինակներ, օրինակ՝ Ի.Վ. Շմարովը և Ա.Ս. Միխլինը, այն էլ՝ առանց դասակարգման այդ չափանիշն առաջ քաշելու պատճառը մատնանշելու[5]:

---

[1] Այդ մասին մանրամասն տե՛ս **Брлиантов А.Б.,** Дифференцация наказания и степень испрсвления осужденных к лишению свободы: Монография.- ВНИИ МВД России, 1997, 21-45 էջերը:

[2] Տե՛ս **Стручков Н.А.,** Курс исправительно-трудового права: Проблемы особенной части. М., 1985, с. 21:

[3] Պատժի կատարման նպատակները թվարկված են օրենքում: Սակայն պատժի տարբեր տեսակները կատարելիս այդ նպատակները կենսագործվում են ոչ հավասարաչափ: Որոշ պատժատեսակներ առաջացնում են նաև բացասական հետևանքներ: Այս երևույթը վեր է հանված դեռ խորհրդային շրջանում (տե՛ս **Хохряков Г.Ф., Саркисов Г.С.,** Преступления осужденных: причини и предупреждение: (Основные проблемы пенитенциарной криминологии) /Отв. редактор Сахаров А.Б.- Ер.: Айастан, 1988, էջ 212-213):

[4] Տե՛ս Уголовно-исполнительное право России /Под ред. А.И. Зубкова.- М.: Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, с. 288-289.

[5] Տե՛ս Уголовно-исполнительное право России /Под ред. проф. В.И. Селивестрова. – 2-е изд., перераб. и доп. – М.; Юристь, 2000.- с. 291:

4. Դատապարտված անձանց դասակարգման չափանիշը չի կարող լինել կամայական, պատահական, ածանցյալ հատկությունը: Ազատազրկվածներին դասակարգելիս որպես հիմք պետք է վերցնել էական, վճռորոշ հատկանիշը, որից բխում և ածանցվում են տվյալ խմբի մնացած հատկանիշները: Դրանց հիմնական մասը նախասահմանված է քրեական իրավունքով, քրեակատարողական իրավունքը միայն հստակեցնում և մանրամասնում է այդ չափանիշները և շրջանակը:

5. Ազատազրկման դատապարտվածների դասակարգման չափանիշները բաժանվում են երեք տեսակի՝ իրավական, մանկավարժական, հոգեբանական: Միևնույն ժամանակ դրանք կարող են լինել ֆիզոլոգիական (սեռ, տարիքը, առողջական վիճակը) և սոցիալական (հանցագործության հասարակական վտանգավորությունը, հանցագործ անձի բնութագիրը, հանցավոր դիրքորոշման կայունությունը)[1]:

Քրեակատարողական իրավունքի տեսության մեջ ազատազրկման դատապարտված անձանց դասակարգումն ավանդաբար համարվում է քրեական և քրեակատարողական իրավունքների պատժի անհատականացման սկզբունքի կենսագործման միջոց: Այս տեսակետին են ինչպես խորհրդային ուղղիչ աշխատանքային իրավունքի տեսությունը, այնպես էլ ներկայիս քրեակատարողական իրավունքի տեսությունը:

Խորհրդային հեղինակներից Ն. Ա. Բելյաևը գտնում էր, որ «դասակարգումը կատարվում է պատժի անհատականացման սկզբունքն ավելի հետևողական կենսագործելու համար»[2]: Քրեակատարողական իրավունքի արդի տեսաբանները ևս գտնում են, որ դասակարգումն անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում տվյալ տեսակի պատժի կատարումը տարբերակելու համար, պայմանավորում է քրեակատարողական հիմնարկների համակարգը, պայմաններ է ստեղծում՝ անհատականացնելու պատժի կատարումը[3]:

Ե՛վ խորհրդային ուղղիչ-աշխատանքային իրավունքի, և՛ արդի քրեակատարողական իրավունքի տեսությունների այս մոտեցումներն անկասկած հիմնավորված են: Սակայն դասակարգման առանձին չափանիշների խորացված ուսումնասիրությունը և համեմատությունը հիմք են տալիս առաջ քաշելու ենթադրություն, որ դա չի վերաբերում իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների՝ որպես ազատազրկման առանձին խմբում դասելուն և նրանց նկատմամբ պատիժն անջատ կիրառելու ինստիտուտին:

Քրեակատարողական իրավունքի տեսության մեջ ընդունված մոտեցումների համաձայն՝ դասակարգումը դատապարտյալների բաժանումն է հարաբերականորեն միասեռ խմբերի՝ կախված կատարված հանցագործության հանրային վտանգավորության աստիճանից, անցյալում ունեցած դատվածությունից, սեռից, տարիքից և անհատի այլ առանձնահատկություններից[4]: Ինչպես նկատում ենք, վերը

---

[1] Տե՛ս Советское исправительно-трудовое право /**Беляев Н.А., Бойцов А.И.** и др., под ред. Н.А. Беляева, В.С. Прохорова.- Л.: Изд-во Ленинградского университета, 1989, с. 70.

[2] Տե՛ս **Беляеев Н.А.,** Классификация осужденных и их распределение по исправительно-трудовым учреждениям //Советское исправительно-трудовое право /**Беляев Н.А., Бойцов А.И.** и др., Под ред. Н.А. Беляева, В.С. Прохорова.- Л.: Изд-во Ленинградского университета, 1989, с. 68-69.

[3] Տե՛ս **Михлин А.С., Шмаров И.В.,** Классификация осужденных к лишению свободы и распределение их по исправительным учреждениям //Уголовно-исполнительное право России /Под ред. проф. В.И. Селивестрова. – 2-е изд., перераб. и доп. – М.; Юристь, 2000.- с. 287; **Хачикян А.М.** Лишение свободы: Криминологические и уголовно-исполнителные проблмы. Изд. Ереванского университета.- Ереван, 2008, 192 с.; **Խաչիկյան Հ.Մ.,** Հայաստանի Հանրապետության քրեակատարողական իրավունք: Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատ., Եր., 2011, էջ 149:

[4] Տե՛ս **Михлин А.С., Шмаров И.В.,** Классификация осужденных к лишению свободы и распределение их по исправительным учреждениям //Уголовно-исполнительное право России /Под ред. проф. В.И. Селивестрова. – 2-е изд., перераб. и доп. – М.; Юристь, 2000.- с. 287:

նշված նպատակների և դասակարգման չափանիշների շրջանակում չի տեղավորվում իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների առանձնացումը[1]:

Արված վերլուծությունը թույլ է տալիս հիմնավորելու, որ, ըստ էության, ազատազրկման դատապարտված անձանց դասակարգման՝ օրենքով ամրագրված չափանիշների գերակշռող մասը, բացառությամբ ազատազրկման դատապարտված իրավապահ մարմինների նախկին աշխատակցի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիություն չունեցող (այլ երկրների քաղաքացիներ և քաղաքացիություն չունեցող) անձանց խմբերից, համարվում է պատժի կատարման անհատականացման միջոց: Նույնիսկ սեռային հիմքով բաժանումը հետապնդում է պատժի կատարման անհատականացման նպատակ: Բայց նախկինում իրավապահ համակարգում աշխատելը կամ ՀՀ քաղաքացիություն չունենալը որպես դասակարգման չափանիշներ որևէ կապ չունի պատժի անհատականացման սկզբունքի հետ:

Ամեն մի գործընթաց և գործողություն ընդհանրապես, քրեակատարողական ոլորտում հատկապես հետևում են որոշակի նպատակներ, կոչված են ապահովելու ինչ-որ մի դրություն, իրերի վիճակ: Այս կապակցությամբ ազատազրկման դատապարտվածների դասակարգումը ևս հետապնդում է որոշակի նպատակներ: Տեսաբաններն ամփոփում են այդ նպատակները հետևյալ սխեմայում: Ազատազրկման դատապարտվածների դասակարգումը կոչված է ապահովել՝

ա) դատապարտյալների տարբեր խմբերի մեկուսացումը՝ նպատակ ունենալով կանխել առավել վտանգավոր հանցագործների բացասական ազդեցությունը պակաս վտանգավորների վրա,

բ) ուղղիչ հիմնարկների առավել արդյունավետ համակարգի ստեղծումը,

գ) ուղղիչ ներգործության միջոցների և մեթոդների խիստ անհատական կիրառումը,

դ) հանցագործության հանրային վտանգավորության, հանցագործի անձի ու պատժի բովանդակությունը կազմող պատժիչ միջոցների ծավալի ճիշտ հարաբերակցությունը,

ե) պատժի կատարման համար պատշաճ պայմանների ստեղծումը[2]:

Դասակարգման նպատակների այս խումբը, որ դրված է ազատազրկման դատապարտվածների դասակարգման ինստիտուտի առջև, հիմնականում կապված է պատժի տարբերակման ու անհատականացման հետ, կոչված է իրականացնելու հենց դրանք: Այդ նպատակներում չեն տեղավորվում ազատազրկման դատապարտված անձանց դասակարգման՝ օրենքով սահմանված մի շարք չափանիշներ, հատկապես քաղաքացիության հարցը և նախկինում իրավապահ մարմինների աշխատակից լինելու հանգամանքը:

Եթե այս նպատակների համատեքստում վերլուծենք իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալներին անջատ պահելու պահանջը, ապա կտեսնենք, որ այն որևէ կապ չունի դրանց հետ և նույնիսկ այդ նպատակներից որոշ մասի հետ ինչ-որ տեղ հակասության մեջ է մտնում: Մասնավորապես՝ զուտ ձևա-

---

[1] Այդ շրջանակում չի տեղավորվում նաև օտարերկրացիների և ընդհանրապես քաղաքացիություն չունեցող (ապատրիդ) անձանց նկատմամբ ազատազրկման անջատ կիրառման կարգը: Եթե դասակարգումը դատապարտյալների բաժանումն է միասեռ խմբերի՝ ելնելով կատարված հանցանքի հանրային վտանգավորության աստիճանից, նախկինում ունեցած դատվածությունից, տարիքից և այլ առանձնահատկություններից, նպատակ ունի ավելի հետևողական իրացնել պատժի անհատականացման սկզբունքը, ապա այս անձանց քաղաքական-իրավական հատկությունը՝ ՀՀ քաղաքացիության բացակայությունը, որևէ կապ չունի այդ նպատակի հետ: Այստեղ առաջնային է այդ անձի առավել անվտանգության ապահովումը, որով կանխվում է միջազգային դիվանագիտական սկանդալը:

[2] Տե՛ս Советское исправительно-трудовое право /**Беляев Н.А., Бойцов А.И.** и др., под ред. Н.А. Беляева, В.С. Прохорова.- Л.: Изд-во Ленинградского университета, 1989, с. 69:

կան տրամաբանության տեսանկյունից, առանց սոցիալական հիմքերի հաշվառման, իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների անջատ պահելու պահանջն իռացիոնալ է, այլ ոչ թե ռացիոնալ. անջատ պահելը չի ազդում այդ խմբի անձանց և նրանց նկատմամբ վերասոցիալականացման կիրառվող միջոցների հարաբերակցության կամ համակարգի վրա:

Այսպիսի եզրակացությունն առաջ է բերում հարցադրում. այդ դեպքում ո՞րն է իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտված անձանց դասակարգման առանձին խմբում դասելու նպատակը: Այս հարցի հիմնավոր պատասխանը կարելի է համարել տվյալ անձանց անվտանգության ապահովումը պատժի կրման ընթացքում: Այսինքն՝ իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների դասակարգման առանձին խմբում տեղավորելը ոչ թե արտոնություն է, այլ հարկադրված միջոց, որը նպատակամղված է ազատազրկման ձևով պատժի կատարման ընթացքում տվյալ խմբի անձանց անվտանգության ապահովմանը: Դա հաստատում է այն փաստը, որ առանձին դասակարգման խումբ են կազմում նաև ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք:

Իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց ազատազրկման ձևով պատժի կատարման ընթացքում անջատ պահելու սոցիոլոգիական հիմքը քրեակատարողական հիմնարկներում առկա բարքերն են, դրա իրավաբանորեն ձևակերպված չափանիշը՝ այս անձանց նախկինում զբաղեցրած պաշտոնը կամ աշխատանքի բնույթը: Այսպիսի եզրակացությունից բխում է, որ քրեակատարողական իրավունքի տեսության մեջ ազատազրկման դատապարտվածների դասակարգման տեսական բովանդակությունը պետք է լրացվի հետևյալ հիմնադրույթով. ազատազրկման դատապարտված անձանց դասակարգման նպատակներից, բացի արդեն մշակվածներից, պետք է ճանաչել նաև այդ անձանց անվտանգության ապահովումը, հետևաբար ազատազրկվածների դասակարգման մեթոդաբանությունը ոչ միայն պատժի կատարման ու կրման անհատականացման, այլ նաև ազատազրկման դատապարտվածների մի շարք անձնական և այլ բնույթի իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց է: Ընդ որում նման նպատակ են հետապնդում ոչ միայն իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալներին դասակարգման առանձին խմբում առանձնացնելը և պատժի անջատ կատարումը, այլ նաև ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց և շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություններով տառապող դատապարտյալների առանձնացումը (ՀՀ ՔԿՕ, հոդ. 68, մաս 1, կետ 5): Այս առաջարկության հանրաճանաչ դառնալու շնորհիվ կլուծվեն դասակարգման նպատակների ու մեզ հետաքրքրող դասակարգման խմբի, դասակարգման՝ որպես անհատականացման միջոցի և իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների՝ դասակարգման այդ շրջանակում չտեղավորվելու կոլիզիաներն ու տարաձայնությունները:

Քրեակատարողական իրավունքի ազատազրկման դատապարտվածների դասակարգման տեսության հիմնադրույթների համաձայն՝ գոյություն ունի սերտ կապ այդ դասակարգման նպատակների և չափանիշների (հիմքերի) միջև, իսկ դրանք կամայական հայեցողության արդյունք չեն, այլ ունեն իրավական, սոցիոլոգիական լուրջ հիմքեր ու պատճառներ: Նշանակում է՝ անհրաժեշտ է պարզել ազատազրկման դատապարտվածների դասակարգման նպատակների և դասակարգման չափանիշների միջև կապը՝ հասկանալու համար մեզ հետաքրքրող դատապարտյալներին ինքնուրույն դասակարգման խմբում առանձնացնելու իրավական ու սոցիոլոգիական հիմքերը:

Քրեակատարողական իրավունքի տեսությունը դեռևս խորհրդային շրջանից բավականին մանրազնին մշակել է ազատազրկման դատապարտվածների դասակարգման նպատակների (ինչը վերլուծեցինք վերը) և չափանիշների համակարգը: Ընդ որում, այս հարցի մշակման ընթացքում առաջ են քաշվել հետաքրքիր մեթոդաբանական մոտեցումներ այն մասին, որ ազատազրկման դատապարտվածների

դասակարգման նպատակներից պետք է բխեն նաև այն չափանիշները, որոնք կիրառվելու են բոլոր դատապարտյալներին որոշակի խմբերի բաժանելու համար[1]: Սակայն մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից չենք նկատում որևէ կապ ազատազրկման դատապարտված իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների առանձնացման չափանիշի, այն է՝ աշխատանքի վայրը մինչև ազատազրկումը, և դասակարգման մինչ այժմ մշակված և հանրաճանաչ նպատակների միջև: Ստացվում է թյուր տպավորություն, որ մեզ հետաքրքրող դասակարգման խումբը, կարծես թե, հայեցողաբար առաջ քաշված չափանիշի հիման վրա կատարված դասակարգում է, որովհետև չկա որևէ կապ այդ չափանիշի (մինչ ազատազրկումն աշխատանքի վայրի) և դասակարգման քրեակատարողական տեսության մեջ հանրաճանաչ նպատակների միջև:

Այսպիսով, հիմք ընդունելով մինչ այժմ կատարված վերլուծությունը՝ ազատազրկման դատապարտվածների դասակարգման նպատակ պետք է համարել դատապարտյալների անվտանգության ապահովումը: Հետևաբար, ազատազրկման հետ կապված պատիժների դասակարգումը, բացի պատժի կատարման անհատականացման միջոցից, պետք է դիտարկել նաև անվտանգության ապահովման նպատակի ապահովման իրավական միջոց: Այս մոտեցումների տեսական ընկալումը լուծում է ենթադրյալ հայեցակարգային հակասությունը ազատազրկման դատապարտվածների դասակարգման նպատակների ու դասակարգման չափանիշների մի մասի միջև, որովհետև ազատազրկման դատապարտված իրավապահ մարմինների նախկին աշխատակիցների դասակարգման խմբի առանձնացումը կապվում է դասակարգման նոր և յուրահատուկ նպատակի հետ, այն է՝ ազատազրկման դատապարտվածների կյանքին ու առողջությանը, այլ իրավունքներին սպառնացող վտանգների կանխումը:

Այսպիսի տեսական եզրակացությունը զուտ վերացական դատողությունների արդյունք չէ, այլ ունի իրական օրենսդրական մի քանի հիմքեր: Դրանցից առաջինը ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 68 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն է, համաձայն որի՝ քրեակատարողական հիմնարկում այլ անձանցից անջատ է պահվում նաև այն դատապարտյալը, որի կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում մյուս դատապարտվածներից: Որոշումն այդ մասին ընդունում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմը: Օրենսդրական նման լուծման հիմքում ընկած է դատապարտյալի անվտանգության ապահովման առաջնայնությունը: ՌԴ ՔԿՕ-ն նախատեսում է ազատազրկման դատապարտված անձի դիմումի հիման վրա այլ քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու հնարավորությունը, իսկ քրեակատարողական իրավունքի տեսությունը դա դիտարկում է որպես ազատազրկման դատապարտված անձի անձնական անվտանգության ապահովման եղանակներից մեկը[2]:

Սակայն, ազատազրկման դատապարտված անձանց անվտանգության ապահովման վերը բերված եղանակներն անհատական բնույթ ունեն, որովհետև խոսքը դասակարգման ինչ-որ խմբում գտնվող ազատազրկման դատապարտվածի՝ իր իսկ խմբից անջատելու մասին է, իսկ դա կարող է ունենալ զանազան պատճառներ: Ընդ որում, դա կարող է տեղի ունենալ նաև հենց բուն իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների խմբում կամ նրանց քրեակատարո-

---

[1] Տե՛ս Советское исправительно-трудовое право /**Беляев Н.А., Бойцов А.И.** и др., под ред. Н.А. Беляева, В.С. Прохорова.- Л.: Изд-во Ленинградского университета, 1989, с. 69:

[2] Քրեակատարողական իրավունքի տեսության մեջ ընդունված կարծիքներից մեկի համաձայն՝ քրեակատարողական համակարգը պետք է ապահովի ոչ միայն անձնակազմի, այլ նաև դատապարտյալների անվտանգությունը (Характеристика осужденных к лишению свободы. По материалам специальной переписи 1999 г. /Под ред д.ю.н., проф. А.С. Михлина.- М.: Юриспруденция, 2001, с. 117):

ղական հիմնարկի շրջանակում: Օրենսդրական այս լուծումը գալիս է հաստատելու, որ դատապարտյալների անվտանգության շահերի բավարարման համար օրենսդիրն այնուամենայնիվ նախատեսել է որոշակի անահատական լուծումներ:

Այսպիսով, եթե ազատազրկման դատապարտված անձին քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող որևէ խմբում սպառնում է վտանգ, ապա օրենքը նախատեսում է դրա կանխման միջոցը՝ նրան անջատ պահելը, որի կենսագործողը քրեակատարողական հիմնարկի վարչակազմն է: Սակայն նման միջոցառում կարող է նախաձեռնել նաև օրենսդիրը՝ ելնելով ազատազրկման դատապարտվածների որևէ խմբի անվտանգության ապահովման գերակա շահերից: Նման նպատակ են հետապնդում ուրիշների կյանքի և առողջության համար վտանգավոր հիվանդությամբ տառապող ազատազրկվածների առանձնացումը և, անշուշտ, իրավապահ մարմինների նախկին աշխատակիցներին առանձին խմբում տեղակայելը: Այդ դասակարգման իրավական հիմքը << ՔԿՕ-ի 68 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետն է:

Դասակարգման չափանիշն ազատազրկման դատապարտվածների նախկինում կատարած աշխատանքն է իրավապահ մարմիններում: Դասակարգման նման չափանիշը չունի ո՛չ մանկավարժական, ո՛չ հոգեբանական հիմքեր, այլ մասամբ հասարակության մեջ և համատարած քրեակատարողական հիմնարկներում կամ ազատազրկման ձևով պատժի կատարման այլ վայրերում արմատավորված հանցավոր ենթամշակույթն ու բարքերն են:

Այդ ենթամշակույթը դրսևորում է կայուն, հանցավոր թշնամական դիրքորոշում այն ամենի նկատմամբ, ինչը կապված է հանցավորության դեմ պայքարի ու արդարադատության մարմինների, հատկապես դրանց անձնակազմի հետ[1]: Ընդ որում, այդ մշակույթի վտանգներն այնքան իրական, բազմաթիվ և բազմաբնույթ են, որ դրանց կանխումը պատժի կատարման ընթացքում կիրառվող ներգործության միջոցների օգտագործմամբ հնարավոր չէ[2]: Այդ հիմնավոր սոցիոլոգիական պատճառը հիմք ընդունելով՝ օրենսդիրը կիրառել է խնդրի լուծման համապարփակ եղանակ՝ սահմանելով նշված խմբի և մի շարք այլ ենթախմբերի պատկանող անձնաց պատժի անջատ կատարման պահանջը:

Քրեակատարողական իրավունքի տեսության մեջ ազատազրկված անձնաց դասակարգելու հարցում հիմնավորում ստացած մեթոդաբանական դրույթներից մեկն էլ դասակարգման ինստիտուտի համալիրության որակը ճանաչելն է: Խնդրի էությունն այն է, որ ազատազրկման դատապարտված անձնաց դասակարգումը զուտ և միայն քրեակատարողական իրավունքի ինստիտուտ չէ:

Դրա սկզբնական իրավական հիմքերն ու չափանիշները սահմանվում են քրեական իրավունքում, որտեղ բազմաթիվ իրավադրույթներ և իրավական ինստիտուտներ անմիջական կապ ունեն ազատազրկման դատապարտված անձնաց դասակարգման հետ[3]: Սակայն քրեակատարողական օրենսդրությունը կուրորեն չի

---

[1] Քրեակատարողական հիմնարկներում հանցագործությունների կատարման հանգեցնող արժեքային կողմնորոշումների մեջ իրենց կայուն տեղն ունեն դատապարտյալների կողմից հանցավոր ենթամշակույթի ընդունումը և պահպանումը, որը պենիտենցիար հանցավոր վարքագծի ներքին հիմնական պատճառներից է, քրեածին հատուկ գործոն:Այդ մասին մանրամասն տե՛ս **Старков О.Ф., Милюков С.Ф.**, Наказание: уголовно-правовой и криминопенологический анализ.- СПб.: Изд.-во «Юридичекий центр пресс», 2001, էջ 176-177:

[2] Հանցավոր ենթամշակույթի տարատեսակներից է, այսպես կոչված, բանտային ենթամշակույթը: Դրա հիմնահարցերի և հետխորհրդային հասարակության վրա ազդեցության մասին տե՛ս **Олейник А.Н.,** Тюремная субкультура в России: от повседневной жизни до государственной власти.- М.: ИНФРА-М., 2001, XIV, 418 с.

[3] Մասնավորապես խոսքը վերաբերում է քրեական իրավունքի այնպիսի ինստիտուտներին, ինչպիսիք են հանցագործությունների դասակարգումը, հանցագործությունների ռեցեդիվը, քրեական պատասխանատվության տարիքը, անչափահասների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները, մեղքի ձևերը, ազատազրկման ժամկետները և

հետևում քրեական օրենսդրությանը: Այն, անշուշտ, վերարտադրում է դրա՝ որպես նյութական իրավունքի դրույթները, սակայն զարգացնում է դասակարգման ինստիտուտը՝ այն լրացնելով նոր չափանիշներով, ինչի արդյունքում առաջ են գալիս առանձին տեսակի քրեակատարողական հիմնարկներ, ինչպես նաև միևնույն հիմնարկի կառուցվածքում որոշակի խմբերին անջատ պահելու ինստիտուտներ[1]: Ազատազրկման դատապարտվածների դասակարգման իրավական ինստիտուտի համատեքստում անհրաժեշտ է նշել, որ իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալներին անջատ պահելու պահանջը չունի որևէ քրեաիրավական ակունքներ: Այդ անձնաց պատժի կրման քրեաիրավական կողմերը հաշվառվելու են իրենց համար առանձին ստեղծված քրեակատարողական հիմնարկի ներսում՝ քրեակատարողական հիմնարկի տարբեր տեսակների ու պայմանների կիրառմամբ[2]: Այսպիսով, իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների ազատազրկումն անջատ կիրառելու պահանջը քրեակատարողական օրենսդրությամբ սահմանված չափանիշ է: Տեսաբանները միանշանակ կարծում են, որ «... դատապարտյալների դասակարգման չափանիշները և նրանց տարբեր տեսակի քրեակատարողական հիմնարկներում պահելու կանոնները սահմանում է քրեական օրենսդրությունը, իսկ քրեակատարողականը ոչ թե կրկնում է դրանք իր նորմերում, այլ զարգացնում է դրանք: Ազատազրկվածների անջատ պահումը մեկ տեսակի քրեակատարողական հիմնարկի շրջանակում համարվում է քրեակատարողական օրենսդրության իրավազորությունը»[3]:

Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների հիմնահարցի քննարկումը ազատազրկման դատապարտված անձանց դասակարգման օրենսդրական դրույթների և այդ դասակարգման տեսական մոտեցումների (նպատակների, չափանիշների, նշանակության և այլն) համատեքստում հնարավորություն է տալիս կատարված հետազոտությունն ամփոփել հետևյալ եզրակացություններում:

Իրավապահ մարմինների նախկին աշխատակիցներին անջատ պահելն ազատազրկման դատապարտված անձանց դասակարգման քրեակատարողական իրավական ինստիտուտի ենթաինստիտուտ է:

Ազատազրկման դատապարտվածների դասակարգման իրավական ինստիտուտի համալիրության համատեքստում իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալներին անջատ պահելու պահանջը չունի քրեաիրավական ակունքներ: Այդ անձնաց պատժի կրման քրեաիրավական կողմերը հաշվառվելու են իրենց համար առանձին ստեղծված քրեակատարողական հիմնարկի ներսում՝ քրեակատարողական հիմնարկի տարբեր տեսակների ու պայմանների կիրառմամբ: Հետևաբար, իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների ազատազրկումն անջատ կիրառելու պահանջը քրեակատարողական օրենսդրությամբ սահմանված չափանիշ է:

տեսակները, դատվածությունը և այլն (տե՛ս Հայաստանի Հնարապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ վերահրատարակություն՝ փոփոխություններով ու լրացումներով), Ս. Առաքելյան, Հ. Խաչիկյան և ուրիշներ.- Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջեր 87-96, 159-227, 373-418, 509-514):

[1] Պատժի և հատկապես ազատությունից զրկելու հետ կապված, քրեաիրավական և քրեակատարողական տարբերակման, դրանց՝ որպես առանձին տեսակների և դրսևորման եղանակների մասին տե՛ս **Курганов С.И.,** Наказание: уголовно-правовой, уголовно-исполнительный и криминологический аспекты.- М.: ТК Велбы, изд.-во проспект, 2008, с. 129-139:

[2] Այսպես՝ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում սահմանված է դատապարտյալների պատժի կրման անհատականացման քրեակատարողական հիմնարկների հետևյալ լրակազմը՝ փակ, կիսափակ, կիսաբաց, բաց (տե՛ս pmg.am/hy/penitentiaries/penitentiaries-list/2016-09-27-11-04-13):

[3] Տե՛ս Уголовно-исполнительное право России /Под ред. проф. В.И. Селивестрова. – 2-е изд., перераб. и доп. – М.; Юристь, 2000.- с. 288:

Ազատազրկման դատապարտվածների դասակարգման նպատակները տեսաբաները հիմնականում կապում են պատժի տարբերակման ու անհատականացման հետ: Սակայն ազատազրկման դատապարտված անձանց դասակարգման օրենքով սահմանված մի շարք չափանիշներ, հատկապես քաղաքացիության հարցը և նախկինում իրավապահ մարմինների աշխատակից լինելու հանգամանքը չեն տեղավորվում այդ նպատակների համատեքստում:

Իրավապահական մարմինների նախկին աշխատակից անձանց ազատազրկման ձևով պատժի կատարման ընթացքում անջատ պահելու սոցիոլոգիական հիմքը քրեակատարողական հիմնարկներում առկա հանցավոր ենթամշակույթն ու բարքերն են, դրա իրավաբանորեն ձևակերպված չափանիշը՝ այս անձանց նախկինում զբաղեցրած պաշտոնը կամ աշխատանքի բնույթը: Այսպիսի եզրակացությունից բխում է, որ քրեակատարողական իրավունքի տեսության մեջ ազատազրկման դատապարտվածների դասակարգման տեսական բովանդակությունը պետք է լրացվի հետևյալ հիմնադրույթով. ազատազրկման դատապարտված անձանց դասակարգման նպատակ պետք է ճանաչել նաև այդ անձանց անվտանգության ապահովումը, հետևաբար ազատազրկվածների դասակարգման մեթոդաբանությունը ոչ միայն պատժի կատարման ու կրման անհատականցման, այլ նաև ազատազրկման դատապարտվածների մի շարք անձնական և այլ բնույթի իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց է:

Ազատազրկմանը վերաբերող պատիժների դատապարտվածների դասակարգումը բացի պատժի կատարման անհատականացման միջոցից պետք է դիտարկել նաև անվտանգության ապահովման նպատակի ապահովման իրավական միջոց: Այս մետեցումների տեսական ընկալումը լուծում է ենթադրյալ հայեցակարգային հակասությունն ազատազրկման դատապարտվածների դասակարգման նպատակների ու դասակարգման չափանիշների մի մասի միջև, որովհետև ազատազրկման դատապարտված իրավապահ մարմինների նախկին աշխատակիցների դասակարգման խմբի առանձնացումը կապվում է դասակարգման նոր և յուրահատուկ նպատակի հետ, այն է՝ ազատազրկման դատապարտվածների կյանքին ու առողջությանը, այլ իրավունքներին սպառնացող վտանգների կանխումը:

ПРОБЛЕМЫ ОСУЖДЕННЫХ БЫВШИХ СОТРУДНИКОВ ПРАВООХРАНИТЕЛЬНЫХ ОРГАНОВ В КОНТЕКСТЕ КЛАССИФИКАЦИИ ПРИГОВОРЕННЫХ К ЛИШЕНИЮ СВОБОДИ ЗАКЛЮЧЕННЫХ

Давид Зилфимян
Соискатель Кафедры уголовного права ЕГУ,
прокурор прокуратуры Ширакского марза

В работе обсуждаются основные вопросы осужденных бывших сотрудников правоохранительных органов в контексте законодательных положений о классификации лиц, приговоренных к лишению свободы, и теоретических подходов к этой классификации с точки зрения целей, критериев и значимости. Классификация лиц, приговоренных к лишению свободы, это не просто институт уголовного права. Его первоначальные правовые основы и критерии изложены в уголовном праве, где многие правовые институты напрямую связаны с классификацией лиц, приговоренных к лишению свободы.

THE ISSUE OF CONVICTS FORMER LAW ENFORCEMENT OFFICIALS IN THE CONTEXT OF CLASSIFICATION OF PRISONERS

Davit Zilfimyan
PhD Student at the YSU Chair of Criminal Law,
Prosecutor at the Prosecutor's office of Shirak marz

The article is dedicated the issue of convicts-former law enforcement agencies in the context of the legislative provisions for the classification of persons sentenced to imprisonment and the theoretical approaches to the classification, purposes, criteria and significance. The classification of persons sentenced to imprisonment is not a mere institute of penal law. Its initial legal bases and criteria are set out in criminal law where many jurisdictions and legal institutions are directly linked to the classification of persons sentenced to imprisonment.

Բանալի բառեր - *իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալ, դատապարտված անձանց դասակարգում, դատապարտյալներին անջատ պահել, ազատազրկման դատապարտված անձանց դասակարգման օրենքով ամրագրված չափանիշներ, ազատազրկման դատապարտվածների դասակարգման նպատակներ, ազատազրկման դատապարտված անձանց անվտանգության ապահովման եղանակներ*

Ключевые слова - *осужденный бывший сотрудник правоохранительных органов, классификация осужденных, отдельное содержание осужденных, установленные законом критерии о классификации лиц, приговоренных к лишению свободы, цели классификации заключенных, способы обеспечения безопасности осужденных к лишению свободы*

Key words - *the convicts from a former law enforcement officers, classification of convicted persons, separate maintenance of the convicts, standards prescribed by the law on the classification of persons sentenced to imprisonment, objectives of the classification of prisoners, ways of ensuring the security of persons sentenced to imprisonment*